ՄԳ.

Թրքական սուրի շահատակութիւններէն էջ մը։

Գերապատիւ և խոհեմազարդ Տեառն Տեառն Հայր Պօղոս վարդապետին խոնարհաբար ողջոյն կարօտանաց

... վասն հիւանդութեան շահզատէին՝ մեծ աղմուկ երևի լինիլ ի քաղաքն. և յոյժ ծանր է։ Հացն յոյժ սեաւ է և սուղ։ Միսն յոյժ ցանցառ գտանի։ Տրտունջ մեծ ի քաղաքին։ Օրըստօրէ եէնիչէրի աղասին ժողովէ զապստամբս։ Որքան դատաւորք արթուն են, այնքան առաւել ապստամբք չատ։ Ի անատօլու քիփէլի առաջն քայլէ հանդերձ 700 ձիաւորօք. զչէնս կոխէ, զգիւղս աւերէ. զկառավանս յափշտակէ. և զընդդիմացօղսն ի սուր սուսերի մաչէ։ Ընդդէմ սորա ոչ ոք փաշայ գնաց ի պատերազմ. անձնապաստան ընթանայ. և զայս ի նորոյ լուաք, զի ի սեբաստիայ իբրև ալք հինգ հազարք ապստամբեալք ընդդէմ փաշային, կոխեալ զախոռ նորա, զերիվարս նորա առեալ գնացեալ են. և թողեալ զկաղ երիվար մի, և ազդ արարեալ փաշային թէ ահա մեք գնամք, և դու հետևեաց մեզ կաղ երիվարաւ, և հեգնեալ զնա մեծապէս։ Վասն թոռան չահի պարսկաց՝ ասեն թէ թագազարդեցաւ ի Թֆլիզ, և խաղաց գնաց ի սպահան. այսպէս հաստատեն. և թէ զնա հաստատեալ իցէ ի թագաւոր՝ մոսկոֆ։...

գրեցաւ ի պէկ օղլի 1757 *ի յուլիսի* 21

Նուաստ ծառայ

Աթանաս վարդապետ [Եպիսկոպոս]

ՄԴ.

Յովհաննու Երուսաղեմայ յատկացուած տօնը՝ զոր Մեծ Պահոց մէջ կը կատարենք՝ կ'ենթարկուի վաւերաթղթիս մէջ կնճռոտ կացութեան մը, երևան եկած ցայսմաւուրքի մը համաձայն, ըստ որում՝ անոր տեղ կը նշանակուի Ս. Ոսկեր.ի անունը։

Յիշենք սակայն, որ հետագայ ժամանակի մէջ նախանձախնդիր ոգւով ու խիստ ղառնացած ոճով կ'արտայայտուի Հ. Մկրտիչ Աւգերեան՝ նման յեղյեղուած կարծիքներու դէմ այսպէս. «Թող զի և ոմանք յիմաստակաց առ մեօք՝ կամեցան իմանալ «յայսմ միջոցի աղցից անուամբ Յովհաննու զՈսկեբերանն որպէս կրկին տօնեալ, «կամ զիմաստասէրն ի կարգէ յիշատակելեաց ի թիւս տօնելեաց վերածեալ. և այլ «ևս մտահանոյ կարծիք առ չգիտելոյ զստոյգ պատմութիւն վարուց Յովհաննու երուսաղեմացւոյ։ Ծանիր և զայս ինչ կարևոր, զի ի հին և յերկաթագիր Ճաշոցի «մերում դնի աստանօր ի Գ. շաբաթու աղցից Մարտի ամսոյ՝ որ օր ԺԹ. յիշատակ «է Յովհաննու երուսաղեմացւոյ։ Սաղմոս ՃԺԵ. Կցուրդ. Պատուական է առաջի Տն. Պօղ. «Առ. ի Տիմոթ. Զայս վկայութիւն դնեմ. Աւետ. Ես եմ հովիւն քաջ..., որպէս և ի «հին տօնացոյցս գրի. «Շար. Յովհաննու Երուսաղեմի հայրապետի. Որ զանձամբ... «Եւ սակայն յետին օրինակագիրք հայելով ի սուտ պատմութիւն կուրանալոյ Յով- «հաննու որպէս թէ առ արծաթսիրութեան՝ կարի տխմարութեամբ ի բաց բարձեալ «զհին ընթերցուածս յանկաւորս սրբոյ հայրապետի՝ կարգեալ են զայլ նոր ըն- «թերցուածս վասն արծաթսիրութեան և կուրութեան... ի դատաստան եկի... որ «է ամենևին անվայել սրբոյն. վասն որոյ արժան է փոխել զայսոսիկ նորամուտ «հնարս և պահել զնախնեացն կարգաւորութիւն» (*Աւգեր. Վրք. Սրբ. Հատ. Բ.* էջ 480)։